Արձանագրություն N 15

**ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի մրցույթի փուլի գնահատող հանձնաժողովի նիստի /տեխնիկական առաջարկի գնահատում/**

**/ՀՀ կառավարության՝ ի դեմս Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության միջև 21.11.2016թ. կնքված վարձակալության պայմանագրի անկախ տեխնիկական աուդիտորական ծառայության ձեռքբերման /**

<u>Երկիր</u>

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան

<u>Ընթացակարգ</u> 23 հունիսի 2026թ.

Անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի փուլ:

<u>Ծրագիրն իրականցնող մարմնի անվանումը</u>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:

<u>Ծրագրի անվանումը</u>

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:

**<u>Նիստին մասնակցում էին՝</u>**

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Քանքանյանը,

Հանձնաժողովի անդամներ Ա. Մարգարյանը, Ա. Սիմոնյանը, Ս. Ասրյանը, Ա. Առուշանյանը, Ա. Սերգոյանը և Մ. Բաբայանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Հանձնաժողովի նիստի օրակարգը**

---

Հանձնաժողովի նիստի օրակարգում քննարկվող հարցեր.

1. ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ծածկագրով ընթացակարգի մասնակից կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի տեխնիկական առաջարկների գնահատում, ամփոփում և հաստատում,
2. ֆինանսական ծրարների բացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

**Մասնակից ընկերությանների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ**

---

«ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ» ծածկագրով ընթացակարգի 16.06.2026թ. գնահատող հանձնաժողովի հրավիրված նիստի ընթացքում, մասնակիցների հայտերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ, մասնակիցների կողմից շտկվել են սահմանված կարգով և ժամկետում:

**Հանձնաժողովի որոշման վերաբերյալ**

---

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ծածկագրով ընթացակարգի մասնակից «Fichtner GmbH & Co. KG» և «Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊ ընկերությունների հայտերը գնահատել բավարար:

2. Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հանձնաժողովը հաստատեց գնահատման արդյուքները.

| Հայտատուներ | Տեխնիկական առաջարկի միավորը /Միջին Գնահատական/ |
|---|---|
| | |
| Fichtner GmbH & Co. KG | 94.93 |
| «Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊԸ | 94.79 |

3. Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված տեխնիկական առաջարկները համարել ամփոփված:

**Ֆինանսական փաթեթների բացման վերաբերյալ**

ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ծածկագրով ընթացակարգին մասնակից ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական ծրարների բացման օր սահմանել 2026 թվականի հունիսի 26.06.2026թ.-ը ժամը 11:00, որը տեղի կունենա ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ:

Ֆինանսական ծրարների բացման օրվա, ժամի և վայրի վերաբերյալ ծանուցել Ընկերություններին:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-7, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ________ Տ. Քանքանյան

անդամներ ________ Ա. Մարգարյան

________ Ա. Սիմոնյան

________ Ս. Ասրյան

________ Ա. Առուշանյան

________ Մ. Բաբայան

________ Ա. Սերգոյան

Քարտուղար ________ Ա. Սարգսյան